

## «ԴԱՍԱՎԱՆԴԻՌ, ՀԱՅԱՍՏԱՆ»-Ը ԱՐԴՅ-ՈՒՄ



**Ապրիլի 20-ին Արդյ ուսանողների հետ հանդիպել է «ԴասավանդիՌ, Հայաստան» կրթական հիմնադրամի առաջնորդության զարգացման ծրագրի համալսարանական հակաքագրման դեկավար Անժելա Գալստյանը:**

Ուսանողները ծանոթացել են «ԴասավանդիՌ, Հայաստան» կրթական հիմնադրամի առաջնորդության ու տեսլականին:

«ԴասավանդիՌ, Հայաստան» կրթական հիմնադրամը առաջարկում է կրթության ոլորտում կարիերա սկսելու հնարավորություն:

Սիրելի՝ ուսանողներ, եթե ցանկանում եք զարգացնել ձեր գիտելիքներն ու հմտությունները, բացահայտել ձեր ուժեղ կողմերն ու ներուժը, օգտագործել ձեր հմտությունները՝ ի նպաստ մեր երկրում կրթական հնարավորությունների ընդլայնման ու համայնքների զարգացման, ապա շտապե՛ք դիմել հիմնադրամի Առաջնորդության զարգացման երկայնական ծրագրին: Միանալով «ԴասավանդիՌ, Հայաստան»-ի շարժմանը՝ դուք երկու տարի ժամկետով որպես Ուսուցիչ-առաջնորդ տեղափոխվելու և դասավանդելու եք Հայաստանի և Արցախի մարզային համայնքների հանրակրթական դպրոցներում՝ լրացնելու առկա մանկավարժների բացը միևնույն ժամանակ ստանալով հիմնադրամի կողմից ամսական օժանդակություն: Ծրագիրն

իրականացվում է ՀՅ և ԱՅ ԿԳՄՍ նախարարությունների հետ համագործակցությամբ:

Մինչ այս տարվա սեպտեմբերի մեջը «ԴասավանդիՌ, Հայաստան»-ը Զեզ կվերապատրաստի և կփոխանցի անհրաժեշտ գիտելիքներն ու գործիքակազմը, որպեսզի դուք պատրաստ լինեք որպես Ուսուցիչ-առաջնորդ գործուղվել համայնք:

Միանալով ծրագրին՝ դուք կունենաք.

\* Մասնագիտական ածի հնարավորություն,

\* Ֆինանսական աջակցություն (ի հավելումն դպրոցի աշխատավարձի),


\* Կրթաթոշակ մանկավարժի մասնագիտությամբ մագիստրատուրայում ուսանելու համար,

\* Շարունակական մասնագիտական աջակցություն ողջ ծրագրի ընթացքում (առաջնորդություն, նախագծերի կառավարում և այլն):

Եթե ցանկանում եք կերտել Հայաստանի և Արցախի ապագան կրթության միջոցով և միաժամանակ սկսել ձեր կարիերան հեռանկարային հնարավորություններով, ապա ծանոթացե՛ք մասնակցության պայմաններին և լրացրե՛ք հայտադիմումը հետևյալ հղումով՝ [www.teach-forarmenia.org/move-to-armenia](http://www.teach-forarmenia.org/move-to-armenia): Հայտադիմումների ընդունման վերջնաժամկետը ապրիլի 30-ը է:



### «Քո Ժամանակը»



ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՐԱՆ  
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՍՍԱԹԵՐԹ

Խմբագիր՝ Զ.ՍԱՀԱՅՅԱՆ  
Հանձնի պատուախանառու՝  
Աննա Հայրապետյան  
լրագրություն 2-րդ կուրս

Տպաքանակ՝ 400  
Տպագովում է Արցախի  
պետական համալսարանի  
իրատարակության  
տպաքանում  
Մեր հասցեն՝ Ա.Գոշի 5:  
Հեռ.՝ (047) 94 04 91



Ուզո՞ւմ ես գուշակել, տեսմել մի ժողովրդի  
ապագան՝ նայիՌ նրա երիտասարդությանը:  
Գարեգին Նժոյեց  
Նո 3  
ԱՊՐԻԼ  
2022

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՍՍԱԹԵՐԹ

### ՀԱՅՐԵՆԻՔՆԵՐՆ ԱՊՐՈՒՄ ԵՆ ՀԱՅՐԵՆԱՎԻՐՈՒԹՅԱՆ

«Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ և մեռնում դրա պակասի պատճառով», -ասել է Նժոյեցը: Հայրենասիրություն, որ մեր հերոսների մեջ միշտ չափից շատ է լինում: Դրա վառ ապացույցը Արցախյան ազատամարտը, ապրիլյան քառոյան և 44-օրյա պատերազմներն են: Հաստատ կարող եմ ասել, որ մեր տղաների սիրանքն ու հայրենասիրական ոգին հպարտանալու ամենավեհ արժեքն է բոլորին համար: Հայրենիքի պաշտպանության համար մինչև վերջ պայքարողների անձաների բանակը հարուստ է իր տարրերվող և եղակի քաջորդիներով: Նրանցից մեկը եղար Սենորիկի Սանգասարյանն է:

Նա ծնվել է 1992թ. հուլիս 19-ին Արցախի Մարտունի քաղաքում: Հաճախել է Բերդաշենի դպրոց, այնուհետև ուսումը շարունակել է Մարտունու Մեսրոպ Մաշտոցի անվան դպրոցում: 2010 թ. զորակոչվել է բանակ, սկզբում ծառայել է Թալիշում, այնուհետև տեղափոխվել Սատաղիս: Եղել է հետախույզ և վարորդ (մեքենա վարել շատ էր սիրում): Հայրենիքի հանդեպ իր պարտքը կատարելուց հետո եղարն ավարտում է ծառայությունը և 6 ամիս հետո նորից անցնում պաշտպանության բանակի շարքերը՝ որպես պայմանագրային գինծառայող: Սկզբնական շրջանում վարորդ էր: Հետո ստանում է համապատասխան կրթություն և դառնում հետախույզական ջոկի հրամանատար:

Մայրը նրան շատ էր ասում, որ բողնի ծառայությունը, բայց եղարն անդրդվելի էր:

Շատ երիտասարդների նման նա էլ էր ապագայի համար պլաններ կազմում: Ուզում էր տուն կառուցել, ընտանիք ստեղծել: Հաճախ էր կրկնում, որ փոքր քրոջը անպայման ուսման կտա հետո էլ կամուսնացնի: Իր ժամանակը սիրում էր անցկացնել ընկերների և ավագ քրոջ երեխաների հետ:



Բարձրածայնած և մտքի խոր ծալքերում պահած երազանքներ ու նպատակներ շատ կլինեին, որոնք պետք է իրականացներ և գնալ առաջ, բայց 44-օրյա պատերազմը կանգնեցրեց նաև եղարի ընթացքը:

Հոկտեմբերի 23-ին Ֆիզուլի կոչվող տեղամասում անօդաչու թռչող սարքի հարվածից եղար սահացու վիրավորվում է: Մոնթեաբերդիցին, որ կյանքի վերջին 10 տարիները անց է կացուել բանակի շարքերում, հենց Մոնթեի պատգամով էլ առաջնորդվեց, և ինքն էլ՝ որպես մերօրյա հերոս, նոր պատգամ թողեց մեզ՝ ապրողներին համար:

Բարի, մարդանոտ, ընկերասեր, պատասխանատու... այսպիսին էր եղարը իրեն ճանաչողների սրտում և հիմա էլ ավելի բարձրում է՝ իր արժեքներով և հավերժ հիշատակության արժանի իր գործով:

Այսօր հայրենյաց պաշտպանի դերը նա կատարում է երկնքից՝ որպես երկնային հրեշտակ, որ հսկում է երկիրը:

Եղարը Մանգասարյանը ԱՅ Կառավարության կողմից պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով և «Արիության համար» մեդալով:

**Աննա Հայրապետյան,  
լրագրություն 2-րդ կուրս**

## ԽՆԱՆԿԱՐԻՍ ԴԵՏԱԼՆԵՐԸ ԽՆԱՄՔՈՎ ՊԱՅԵՔ...



**Երկիրս այսօր նման է մի վիրավոր թռչնակի:** Վիրավոր վերքերը դեռ չսպիացած՝ նորերն ավելացան նրան: Թռչնակս այլևս ուժ չունի թռչելու, կոտրել են թռերը, դարձել հաշմանդամ, բայց ժամանակավոր: Այսօր մենք ապրում ենք ծանր ժամանակներ, կորսված են հիմա Շուշին, Շադրութը և շատ տարածքներ, որ մեզ համար լոկ հողատարածք չեն միայն, այլև՝ հայրենիք, առանձին-առանձին միացնելով կստացվի իմ սրտի խճանկարը: Պատերազմից հետո սրտիս խճանկարի պատկերը կիսատ է մնացել, դետալների կեսն այժմ կորել են, բայց կգտնվեն:

Անկախ հայրենիք: Գեղեցիկ է հնչում, չէ՞: Մեր ժամանակներում «անկախ հայրենիք» ասվածը երազանք է թվում, անհավանական մի իրողություն:

Դեռ հին ժամանակներից ենք երազել ունենալ ազատ ու անկախ հայրենիք: Ու դեռ այդ ժամանակներից են միշտ մեր առջև ծառացել բազմաբնույթ խնդիրներ: Պատերազմ ասվածը կարծես մեր մշտական ուղեկիցը լինի: Բայլում է մեր բոլոր ժամանակների հետ հավասար, կես ժամանապարից հարվածում է մեզ մեջքից, որ ինքը մենակ քայլի ու հասնի իր նպատակին: Բայց

Աստծո զորությամբ մենք գերբնական մի ուժ ենք ստանում և շարունակում պայքարել: Իմ մտահորիզոնում դեռ վաղուց են պայքար և հայքաբերը հանդես գալիս որպես հոմանիշներ:

Շատ ենք չէ՝ մենք ուժեղ: Յիմա բացատրեմ ինչու: Ծնողը երեխային հողին է հանձնում ու շարունակում ֆիզիկապես գոյություն ունենալ, մարտադաշտում մահացու վիրավորումներ ստացած մեր տղաները կազդուրվում են ու շարունակում ապրել, ամուսնուն կորցրած հղի կինը հոգեբանական տվյալտանքներից հետո լույս աշխարհ է բերում երեխայի հոր նոր մարմնացումը և շարունակում է ապրել հանուն նոր բարախող սրտի, այս շարքը կարող են երկար շարունակել... Պայքար, պայքար, պայքար՝ սա է մեր հավերժ ուղեկիցը:

Ես վստահ եմ, որ ուշ թե շուտ մենք կրկին ունենալու ենք ամբողջական հայրենիք, վստահ եմ, որ Շուշիի Սուրբ Ղազանչեցոցի առջև թնդալու է կրկին «Գրավեցինք մենք Շուշին, հասանք Մարտակերտ» երգը, վստահ եմ, որ դեռ բազում պսակադրություններ են լինելու, նոր ընտանիքներ են կազմվելու, նոր Սարմեններ, Արամներ ու Ալբերտներ ենք ունենալու: Շայրենի հողի հանդեպ ծարավը, հայրենասիրությունը մեզ կարի հետ է փոխանցվում: Իմ հայոց մայրեր, կոչ եմ անում Ձեզ, դուք պիտի այսօր և ընդմիշտ հիշեք, որ ազգիս փրկության ազդակը դուք եք ու որ Մաշտոց ծնող մայրը երբեք չի խոնարվում չարի առաջ:

Իմ վիրավոր թռչնակ դու չվախենաս, դու պիտի սավառնես ազատ Արցախում: Իմ սրտի խճանկարն էլ դեռ կամբողջանա, դետալները հիմա թաքուն մի տեղ են, բայց կգտնվեն, իսկ թե գտել եք, խնամքով պահեք, մինչև ես գտնեմ...

**Անժելա Շահամց,**  
լրագրություն 2-րդ կուրս

## ՀԱՅՈ ՍԱՐՅԱՆԸ ՄԻՇ ՄԵԶ ՀԵՏ Է



**Պատկանյանի Արաքսը, Թումանյանի Դեբեդը, Խսահակյանի Արփաչայը, որոնեցին ու գտան «կորած-մոլորված» հարազատին՝ Որոտանին, երբ աշխարհի հետ խոսք բացեց մի նոր բանաստեղծ՝ Յամո Սահյանը, ում քնարերգության գլխավոր կերպարը Յայաստանն է, նրա անցյալն ու ներկան, պատմությունն ու գալիքը: Սահյանական աշխարհը աշխարհից անդին է... Ծիծեռնակների հյուսած հիշողության կապոցներում հարազատ Լորի լեռնաշխարհի բնությունը, կենսահորդ քարափմերը, Որոտանի եղերքը, Գյազբել սարի դարձանող հովք, հայրենական տունը բարոյական արժեքների գանձարան են, առաջին հերթին՝ խղճի, արդար վաստակի, շենության, նաև՝ կեցության:**

Անգին գանձերից գրողը ստացել է ծիածանի գույներն ու աշխարհի բոլոր ծաղիկների բույրերը եւ ստեղծել իր՝ սահյանական կախարդիչ ու ձգող աշխարհը: Բնաշխարհի հետ է կապված մարդու սահյանական իդեալը: Բնությունը Յամո Սահյանի ողջ ստեղծագործության հողն է, պատվանդանն ու զիմանցը, որտեղից գրողը վերցնում է իր պատկերներն ու ձեւերը: Նրա ողջ պոեզիան բնության ձայնն է: Բնության տարբեր պահերը, տարրերն ու երևույթները, ամեն-ամեն ինչ շնչավորվել են Սահյանի գրչի տակ, ծիածանվել բոլոր գույներով եւ ստացել

երկրորդ կյանք՝ հավիտենական կյանք արվեստի մեջ: Բնության առաջ ծնկի եկող քնարական հերոսը աշխարհի հետ կապված է իր սիրով, իր միջավայրին նայող մտահոգ-հիացական հայացքով եւ իր առինքնող երգերով՝ նազող նախրյան բարդին, սեր ավետող ձնծաղիկը, վարդը, մանուշակը... Սահյանական յուրաքանչյուր բար ծանրություն ունի, որի ծալքերում մի ամբողջ պատմություն կա... Սահյանի բարը հայի սիրտ ու հոգի ունի...

քարը պատմությունն է, քարը հայի հոգեւոր կենսատարածքն է, քարը բնավորությունն է, որը նույնիսկ հիշողություն ունի, գիտի խոսել ու կանչել: Սասրենին եւ հայը ճակատագրի նույնություն ունեն: Երկուսն էլ դիմացել են ցուրտ հողմերին եւ արհավիրներին, սակայն «չի ջնջվել արմատով վերջին». այսօր եւս նույնն է: Սահյանը ամենեւին էլ պատմության մոխիրը չի քրքրում եւ շադ չի տալիս ապրողների գլխին, այլ նրա համար անցյալը միաձուլվում է բնության անտես ժամանակին, որտեղ անցյալն ու ապագան մեկտեղվում են, ինչպեսև մարդն ու բնությունը: Բնության միջոցով Սահյանը վարպետորեն ազնվացնում է մարդուն, բյուրեղացնելով կապում է տիեզերքին եւ մարդուն սովորեցնում ծիշտ և գեղեցիկ ապրել: Նա նուրբ ու գտիչ գործիքներով հղկում է մարդու միտքը, մշակում հոգին, «Ծիր կաթինի ճանապարհով» հասցնում Աստծո լույսին: Սահյանի խոսքով բանաստեղծը ճանաչել է տալիս մարդու մեջ եւ աշխարհում եղած գեղեցիկը, այսինքն՝ մարդու միտքը, մշակում հոգին, «Ծիր կաթինի ճանապարհով» հասցնում Աստծո լույսին: Սահյանի խոսքով բանաստեղծը ճանաչել է տալիս մարդու մեջ եւ աշխարհում եղած գեղեցիկը, այսինքն՝ մարդու միտքը, մշակում հոգին, «Ծիր կաթինի ճանապարհով» հասցնում Աստծո լույսին:

Դայ գրականության պատմություն, մագիստրատուրա 2-րդ կուրս  
Լիլիթ Շովիաննիսյան